

տեղին ուր յառաջն եղեալ էր, եւ կայ անդէն մինչեւ ցայսօր»։(7)

Մասնաւորաբար հետաքրքրական դտայ Դաւրիթեցիի այս պատմութիւնը, որովհետեւ Բոկոսն Կարմեղեաններու ժամանակագրութեան մէջ կը հանդիպինք այս մասին կարեւոր վաւերաթուղթի մը, որ մեծապէս հետաքրքրական ըլլալէ զատ ճշդում մըն է Դաւրիթեցիի թուականներուն վրայ։ Մեր հոս տեսնելիք վաւերաթուղթը կը խօսի 16 յունուար, 1620-ին, հին տոմարով Հայոց Եպիփանի տօնին, երբ Զուղայու Հայոց եպիսկոպոս-առաջնորդը խաչը Զէյտէրու գետը ջուրին կը նետէր (բնագրին մէջ Խաչատուրան գրուած գուցէ «Խաչ ի ջուրն»ի տեղ) եւ այդ արարողութեան ներկայ կ'ըլլայ Ապպաս Մեծ։

«Շահը Սպահանէն Զուղայ տանող ճամբաներուն վրայ պահակներ դնել տուած էր, այնպէս որ ձիերը՝ բացի անոնցմէ որ երեւելի անձերու կը պատկանէին՝ չխանգարէին թափօրը։ Աւելի քան 100 արծաթ եւ բիւրեղեայ խաչեր առաջնորդուած Զուղայի տասը Գրիգորեան\*» եկեղեցիներու եկեղեցականներէն եւ Սպահանի քաղաքին երկու եկեղեցիներէն, իւրաքանչիւր խաչ չունենալով չորսէն նուազ եկեղեցական առաջնորդներ՝ ոսկէ դիպակեայ բազմերանդ շուրջաններով եւ մոմակիրներով շրջապատեալ, թափօրով բերուեցան գետեղերք անկից ալ փոքր կղզեակ մը ցանցաղ ջուրի մէջ, մինչ քաղաքէն Պարսիկներու եւ Հայերու մեծ ամբոխ մը խոնուած էին գետեղերքին վրայ եւ արարողութիւնը կը դիտէին։ Շահին սպասելու միջոցը, որ ուշ ժամանեց ընկերակցութեամբ իր որդւոց եւ նախարարներուն, խաղերով եւ պարերով անցուեցաւ։

«Երբ Ապպաս առաջին ժամանեց, Հայոց

Մեղիքսէզէկ Պատրիարքէն (իմա Կաթողիկոս) առաջ անցաւ ջուրէն, եւ բնաւորութեամբ անհանդարտ ըլլալով, իր վրայ առաւ այս Գրիգորեան կրօնական արարողութեան արարողայեալ ըլլալը։ Պատրիարքը հո'ս պէտք էր կանգնէր, հո'ն պէտք է կատարուէին ծխակատարողութիւնները, այնպէս որ խոնում չըլլար, եւ բաղմամբ ուրիշ մանրամասնութիւններ նման կերպով վերահսկուած էին։

«Բուն արարողութիւնը կը բաղկանար ազօթքներէ, ջուրին մէջ միւռոն թափելէ, եւ յետոյ բոլոր խաչերը անոր մէջ մխրճելէ, երբ բաղմամբ անձեր բարեպաշտութենէ մղեալ հանուելով գետը կը մտնան։

«Այն ատեն արարողութիւնը աւարտեցաւ, Ապպաս առաջին կանգնեցաւ, դեռ եւս խիտ կերպով խաչակիրներէն շրջապատուած, գըլխաւոր հայուն կը հարցունէր՝ Վրացի՞ք թէ Ծոսնկները իբր լաւագոյն քրիստոնեաներ կը նկատուէին իր ազգէն, որուն Խօջայ Նազար դիւանադիտօրէն պատասխանեց թէ նախախշեալները աւելի լաւ ծոմ կը պահէին։ Այս Շահը բոլոր ծոմապահութեանց հակառակ ըլլալով, աւելի որոշ կերպով յայտարարեց թէ իր հարցումը անոնց կրօնական օրէնքներ պահելու մասին էր, ինչպէս նաեւ իրենց ծիսակատարութեանց մասին, որուն վրայ Խօջայ Նազար Լատինները զոյլեց։ Յետոյ Ապպաս ուղեց դիւանալ Կարմեղեաններու նահանգային տեղապահէն թէ՛ ըստ իր կարծեաց Հայե՞րը թէ՛ Վրացիք աւելի լաւ քրիստոնեաներ են, եւ Հայր ճան թատուէրու իր քուէն հայոց տուաւ։

«Անձրեւը սաստկանալուն եւ փողոցները ցելոտելուն, Պարսից արքայն իր անմիջական հետեւորդներով երեք Կաթողիկ քարոզիչներով գնաց վախճանեալ Խօջայ Սաֆարի տունը, որ Հայոց գլխաւորն էր, եւ հոն անցուց օրուան մնացեալ մասն ու գիշերը։ Հոս, կրօնական իրերու մասին խօսակցութեանց միջոցին, որ տան մէջ տիրեց երեկոյէն առաջ, Շահ Ապպաս քանի մը անգամ հաւաստեց, թէ ով որ չի հաւատար ի Յիսուս Քրիստոս, եւ չի հաւատար թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ հոգին է, գեֆիր (անհաւատ) մըն է։ Ասկէ զատ ուղեց,

7) Անդ՝ էջ 197:  
\*) Ըսել կ'ուզուի որ 1620-ին իսկ Նոր Զուղայի մէջ Հայ Լուսաւորչականք ունէին 10 եկեղեցիներ եւ երկու հատ ալ Սպահանի քաղաքին մէջ, որով 12 հատ։ 1632-ին կային 15 հայոց եւ 2 ֆոսնկայ եկեղեցիք։ (Յուցակ Թաւրիզի, էջ 33F.):